ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԿԱՐՄԻՐ ՄԱԿԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՐԻԿԵԱՆ
hovhkhor78@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայոց պատմութեան մէջ թերեւս դժուար է գտնել երկրորդ մէկին, ով այնքան սիրուած լինի, ինչքան Վարդան Մամիկոնեանը: Հայ Եկեղեցին հայոց սպարապետին, նրա զինակիցներին ու ապստամբ ժողովրդին հռչակեց յանուն քրիստոնէական հաւատի զոհուած նահատակներ: Սակայն Վարդան Մամիկոնեանի եւ ապստամբների գլխաւոր նպատակը հայոց պետականութեան վերականգնումն էր, եւ Աւարայրի ճակատամարտին Վարդան Մամիկոնեանը մասնակցում է որպէս հայոց թագաւոր: Վարդան Մամիկոնեանի, այնուհետեւ Վասակ Սիւնու՝ հայոց թագաւոր լինելու իրողութիւններին սկզբնաղբիւրների բազմակողմանի քննութեամբ անդրադարձել է Բաբկէն Յարութիւնեանը[1]: Կիսելով մեծանուն հայագէտի կարծիքը՝ ստորեւ փորձենք նրա տեսակէտը հիմնաւորել այլ փաստարկներով:

ԿԱՐՄԻՐ ԳՈՅՆԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՎ

Հայոց միջնադարեան մատենագրութեան մէջ Վարդան Մամիկոնեանը, բացի Քաջ, Սուրբ եւ այլ մականուններից, մեծարուել է նաեւ Կարմիր[2] մականունով: Խօսքը, իրօք, մեծարման եւ պատուանունի մասին է, քանի որ կարմիր գոյնի խորհրդապաշտական-նշանագիտական խորհուրդը հայ միջնադարեան մտածողութեան ու աշխարհընկալման մէջ ունի բացառիկ կարեւորութիւն:

---

[1] Բ. Յարութիւնեան, «Մովսէս Խորենացու "Պատմութիւն հայոց" երկն ունեցել է 'Չորրորդ գիրք'», *Վէմ համահայկական հանդէս*, 3:2012, էջ 169-85: Նոյնիսկ *a priori* կարող ենք հարց տալ, թէ ինչու Վարդան Մամիկոնեանը չպէտք է համարձակուէր թագաւոր լինել, եթէ արդէն Աւարայրի դաշտում դուրս էր եկել սասանեան հզօր բանակի դէմ: Հազիւ թէ Վարդան Մամիկոնեանն ու իր զինակիցները Աւարայրում պաշտպանէին երկրի ներքին այն ինքնավարութիւնը, որի մէջ նրանք գտնւում էին: Աւարայրի ճակատամարտում հայոց բանակը պաշտպանում էր վերականգնուած հայոց թագաւորութիւնը, ինչը Վարդան Մամիկոնեանի մահով նպատակին չհասաւ:

[2] Կարմիր բառն իրանական փոխառութիւն է (Հրաչեայ Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. Բ, Ե-Կ,* ԵՊՀ հրատ., Երեւան, 1973, էջ 558):

Հայ մատենագիրներից Սեբէոսն է, որ 450-451ի ժողովրդաազատագրական պատերազմի առաջնորդ Վարդան Մամիկոնեանին անուանում է Կարմիր.

> Արդ՝ զժամանակս թագաւորութեանն չարագործին Յազկերտի. եւ եթէ ո՛րպէս նա կամէր զաստուածայինն եղծանել կարգս, եւ կամ ո՛րպէս քաջ նախարարացն հայոց եւ նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն եւ զաւրաւք իւրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ, առեալ ի ձեռն զվահանն հաւատոյ, եւ զգեցեալ իբրեւ զզրահ ամրութեան զնախանձն աստուածային բանին, գոգցես թէ առաջի աչաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով զ՚ի վերուստ առաքեալ նոցա զպսակն...[3]:

Ալբերտ Մուշեղեանը ժամանակին ցոյց է տուել, որ Սեբէոսը Կարմիր Վարդան է կոչում միայն Աւարայրի հերոսին՝ ի տարբերութիւն 572ի ապստամբութեան առաջնորդ Վարդան Մամիկոնեանի[4]: Սեբէոսի այս տեղեկութիւնը կարեւոր է այն առումով, որ Կարմիր պատուանունը յատուկ է տրուել Վարդան Մամիկոնեանին՝ ընդգծելով նրա առանձնայատուկ կարգավիճակը հայոց աւատատիրական աստիճանակարգում:

Հայոց մէջ կարմիր գոյնի իմաստաբանական, հիմնականում դրական նշանակութիւններին մենք մանրամասն չենք անդրադառնայ, քանի որ հարցը բաւականին լուրջ ուսումնասիրուել է[5]: Կարմիրը նախատիպային (արքետիպային) գոյն է, առաջին գոյնը, որը մարդը ենթարկեց իրեն[6]: Բանահիւսական կենցաղում, ժողովրդական հաւատալիքներում կարմիր գոյնն առաջին հերթին խորհրդանշել է կեանքը՝ որպէս արեան գոյն: Ընդ որում՝ նահատակի արիւնը համարուել է «մաքուր»՝ ի տարբերութիւն «անմաքուր», օրինակ, սպանութեան արեան: Զատկի կարմիր ձուի մէջ խտացուած է բնութեան վերարտադրութեան, կեանքի յարատեւման գա-

---

[3] *Պատմութիւն Սեբէոսի*, աշխ.՝ Գէորգ Աբգարեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 64-65. նաեւ՝ Սեբէոս, *Պատմութիւն*, արեւելահայերէն թարգմ., առաջ. եւ ծանօթ.՝ Գ. Խաչատրեան եւ Վ. Եղիազարեան, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2005, էջ 43. նաեւ՝ հայր Ներսէս Ակինեան, *Կարմիրն Վարդան եւ Աւարայրի ճակատամարտը ըստ Ղազար Փարպեցւոյ*, Մխիթարեան տպ., Վիեննա, 1951, էջ 4:

[4] Ա. Մուշեղեան, «Վարդանանց պատմութիւնը Եղիշէի եւ Փարպեցու հակընդդէմ մեկնութեամբ», *Գրականագիտական հանդէս*, 15:2014, էջ 41:

[5] Տե՛ս, օրինակ՝ Ա. Իսրայէլեան, «Գոյնի մոգական ուժը հայ ժողովրդական հաւատալիքներում», *Պատմաբանասիրական հանդէս*, 2:2017, էջ 125-42:

[6] Мишель Пастуро, *Красный. История цвета*, *Новое литературное обозрение*, (Միշէլ Պաստուրո, Կարմիր. գոյնի պատմութիւնը), Մոսկուա, 2022, էջ 7:

ղափարը[7]: Կարմիր (ծիրանի[8]) հագուստը, ըստ էութեան, ցոյց է տուել հասարակական բարձր, արքայական ու ազնուական կարգավիճակ[9]:

Յայտնի է, որ քրիստոնէական խորհրդաբանութիւնն առաջացել է աւելի վաղ ժամանակների գոյնի խորհրդաբանական պատկերացումների հիման վրայ: Օրինակ, ուշ անտիկ մշակոյթում կարմիրը կապուած էր արեւի, կրակի, ամռան եւ պատերազմի աստուած Մարսի հետ[10]:

Ծիրանին արքայական գոյն էր նաեւ Աքեմէնեան Պարսկաստանում, սակայն Քսենոփոնի որոշ տեղեկութիւններից կարելի է ենթադրել, որ պատմիչի համար ծիրանին նաեւ կարմիրի հետ է նոյնացուել[11], քանի որ

---

[7] Ա. Ստեփանեան, «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային եւ նշանային համակարգեր)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, պր. 22*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 31, 39:

[8] Ծիրանի ու կարմիր զգեստը որպէս արքայականութեան նշան յայտնի էր հնագոյն, օրինակ, մարական, աքեմէնեան, հելլէնիստական ժամանակներից (Xenophon, *Cyropaedia, Vol. I*, with an English translation by W. Miller, Harvard University Press, Cambridge-Massachusetts, London, 1960, Loeb Classical Library, I, III, 2, էջ 26. նաեւ նոյնի՝ *Cyropaedia, Vol. II*, with an English translation by W. Miller, Harvard University Press, London, New York, 1914, Loeb Classical Library, VIII, III, 3; 13, էջ 348, 354. նաեւ՝ Rufus Curtius Quintus, *History of Alexander, Vol. I,* with an English transl. by John C. Rolfe, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1971, Loeb Classical Library, III, III, 17, էջ 84. նաեւ՝ Элиас Бикерман, *Государство Селевкидов*, (Էլիաս Բիկերման, Սելեւկեանների պետութիւնը), «Գիտութիւն» հրատարակչութեան արեւելեան գրականութեան գլխ. խմբ., Մոսկուա, 1985, էջ 33): Հին եգիպտացիների ու յոյների համար ծիրանին աստուածների, հերոսների ու թագաւորների գոյնն էր (Homer, *The Odyssey, Vol. II*, with an English translation by A. T. Murray, G.P. Putnam's Sons, London-New York, 1919, Loeb Classical Library, XIX, 225, էջ 244. նաեւ՝ *Herodotus*, with an English translation by A. D. Godley, *Vol. I, Books I-II*, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1975, Loeb Classical Library, II, 132, էջ 434. նաեւ՝ *Herodotus*, with an English translation by A. D. Godley, *Vol. II, Books III-IV*, William Heinemann, New York, London, 1928, Loeb Classical Library, III, 20, էջ 26):

[9] Հայր Վարդան Հացունի, *Պատմութիւն հին հայ տարազին*, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 165, 169, 171:

[10] Николай Котанджян, Цвет в раннесредневековой живописи Армении (Анализ памятников VI-VII вв.) (Նիկոլայ Քոթանջեան, *Գոյնը Հայաստանի վաղ միջնադարեան գեղանկարչութիւնում (VI-VII դդ. յուշարձանների վերլուծութիւն)*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1978, էջ 18:

[11] Xenophon, *Cyropaedia, Vol. II, VI, IV, 1; VII, I, 2*, էջ 190, 202. նաեւ՝ Xenophon, *Anabasis*, with an English translation by Carleton L. Brownson, *Vol. III, Books I-VII*, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library, I, V, 8, էջ 50: Ե՛ւ հին յունարէն որφύρεος (ծիրանի, վառ կարմիր, վարդագոյն), ե՛ւ φοινίκεος (կարմիր) իմաստային առումով ուղղակիօրէն կապուած

զինուորականութեան գոյնը կարմիրն է եղել, յատկապէս եթէ նկատի ունենանք, որ *Կիւրոպեդիայ*ից մէջբերուած հատուածներում յիշատակուած Կիւրոս Բ. Մեծն իր բանակի միջավայրում ներկայանում է որպէս ռազմիկ, զօրավար: Հերոդոտոսի տեղեկութիւններից պարզւում է, որ կարմիր թիկնոցը, որը կրել է Դարեհ Ա.ն, խորհրդանշել է թագաւորական եւ զինուորական իշխանութիւնը[12]:

Ծիրանագոյն զգեստով էր մարաց Աժդահակ թագաւորի երազում յայտնուած կինը՝ Հայկազեան Տիգրանի մայրը[13], ինչը խօսում է այն մասին, որ հայ իրականութեան մէջ եւս ծիրանին արքայականութեան խորհրդանիշ է: Ինչ վերաբերում է կարմիր գոյնին, ապա դատելով Վահագնի «հուր մազերից, բոց մօրուսից»[14], կարմիրը եղել է ռազմի աստծոյ, զինուորական դասի գոյնը, ինչը համապատասխանում է այլ աղբիւրների տեղեկութիւններին: Խորենացին նաեւ հաղորդում է, որ կարմիր կօշիկը արքայական իշխանութեան խորհրդանիշ է, ընդ որում՝ Արտաշէս Ա.ն մէկ ոտքին կարմիր կօշիկ կրելու իրաւունքը տալիս է միայն Արգամին[15]: Խորե-

---

են կարմրին՝ լինելով վերջինիս տարբեր երանգները, անկախ այն հանգամանքից, որ այդ բառերի իմաստներից մէկը նաեւ ծիրանին է (*Древнегреческо-русский словарь*, *Том II*, составил И. Х. Дворецкий (Հին յունարէն-ռուսերէն բառարան, հտր. Բ), կազմ.՝ Իոսիֆ Խանանովիչ Դուորեցկի, Օտար եւ ազգային բառարանների պետական հրատ., Մոսկուա, 1958, էջ 1358, 1740. նաեւ՝ Юлия Викторовна Норманская, *Генезис и развитие систем цветообозначений в древних индоевропейских языках* (Եուլիա Վիկտորովնա Նորմանսկայա, Գունանշանների համակարգերի ծագումը եւ զարգացումը հին հնդեւրոպական լեզուներում, ՌԳԱ Լեզուաբանութեան ինստիտուտ), Մոսկուա, 2005, էջ 29): Չմոռանանք, որ ծիրանին ստացուել է կարմիր գոյնի հետ կապոյտի կամ մանուշակագոյնի խառնումից:

[12] *Herodotus*, *Vol. II, III*, 139, էջ 173:

[13] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1991, էջ 75: Մէկ այլ տեղում ծիրանին համարւում է կայսերական իշխանութեան խորհրդանիշ (էջ 236):

[14] Նոյն, էջ 86: Հմմտ. նաեւ՝ Վահագնի խարտեաշ-դեղնակարմիր լինելն ու ծիրանի ծովը (կամ արիւն-ծովը), կարմիր եղէգնիկը (Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. Բ,* էջ 349), որով ներկայացւում է Վահագնի ծննդի միջավայրը:

[15] Խորենացի, էջ 174: Ելնելով այն իրողութիւնից, որ Արտաշէս Ա.ն իր դայեակ Սմբատին չի արժանացնում կարմիր կօշիկ կրելու պատուին, ենթադրում ենք, որ Խորենացու՝ մէկ ոտքին կարմիր զգեստ կրելը վերաբերում է կարմիր կօշիկին, չնայած բացառուած չէ, որ, բացի կօշիկից, խօսքը վերաբերուի նաեւ անդրավարտիքի մէկ ոտքը կարմիր գոյնով ներկուած լինելուն: Ստեփանոս Օրբէլեանը եւս յայտնում է, որ Սիւնեաց իշխանները հին ժամանակներից կարմիր կօշիկ

նացու տեղեկութիւններից մէկից պարզւում է, որ ալանների թագաւորի հետ խնամիացող Արտաշէս արքան Սաթենիկի համար ալանների թագաւորին տալիս է նաեւ կարմիր մորթ[16], այսինքն՝ տուեալ դէպքում կարմիրն արքայական իշխանութեան գոյն է: Ընդ որում, Խորենացու տուեալ տեղեկութիւնում յիշատակուած ոսկէօղ շիկափոկ պարանը (ոսկեգոյն, շէկ գոյնը) եւս խորհրդանշում է արքայական կարմիր գոյնը, որով գերեվարւում է արքայադուստր Սաթենիկը:

Հետաքրքիր է, որ եւրոպական միջնադարում կարմիրը բացասական իմաստով խորհրդանշում էր ասպետների որոշակի դասը, ինչը երեւում է Արթուր թագաւորի մասին պատմող ԺԲ.-ԺԳ. դարերի վէպերից[17]:

Ընդհանրապէս, Խորենացու տեղեկութիւններից երեւում է, որ արքայական իշխանութեան գլխաւոր գոյնը ոսկեգոյնն էր, այսինքն՝ կարմիրի տարբերակներից մէկը, եւ ոսկու հետ կապուած իրերը[18]: Ըստ էութեան, ոսկին եւ արծաթը համարուել են նաեւ զինուորականութեան գոյներ, քա-

---

հագնելու իրաւունք են ունեցել (*Պատմութիւն նահանգին Սիսական*, տպ. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1910, էջ 15): Սիւնեաց պատմիչի այս տեղեկութիւնը ճի՞շտ է թէ՞ սխալ՝ այնքան էլ էական չէ, կարեւորն այն է, որ կարմիր կօշիկ կրելու մասին յիշատակութիւնը կրկին խօսում է զոյգ կօշիկ կրելու իրաւունքը միայն հայոց թագաւորի մենաշնորհ լինելու մասին: Կարմիր կօշիկներ կրելու իրաւունքը պատկանում էր նաեւ բիւզանդական կայսրերին, ընդ որում՝ կարմիր հագուստներ կրում էին նաեւ կայսրուհիները (B. Kiilerich, "Attire and Personal Appearance in Byzantium," in *Byzantine Culture: Papers from the Conference 'Byzantine Days of Istanbul' held on the occasion of Istanbul being European Cultural Capital 2010*, Istanbul, May 21-23 2010, ed. by D. Sakel, Türk Tarih Kurumu, Ankara, 2014, էջ 445): Ըստ էութեան, Մօրիկ կայսեր կօշիկը, որի մասին հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, կարմիր գոյն է ունեցել (Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ գիտութիւնների ակադեմիայի հրատ., Երեւան, 1961, էջ 48): Պատմիչը կայսերական թագը եւ կօշիկը բարձրագոյն իշխանութեան խորհրդանիշեր է համարել:

[16] Խորենացի, էջ 179:

[17] Мишель Пастуро, *Символическая история европейского средневековья* (Միշէլ Պաստուրօ, Եւրոպական միջնադարի խորհրդաբանական պատմութիւնը), «Ալեքսանդրիա» հրատ., Սանկտ-Պետերբուրգ, 2019, էջ 217:

[18] Խորենացի, էջ 174, 190. նաեւ՝ *Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց*, բնագիրը՝ Ք. Պատկանեանի, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, էջ 354, 375. նաեւ՝ Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիր եւ ներած.՝ Վ. Առաքելեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 198. նաեւ՝ Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, աշխատ.՝ Վ. Մ. Վարդանեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1985, էջ 442. նաեւ՝ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց*, աշխարհ. թարգմ. եւ ծանօթ.՝ Գ. Բ. Թոսունեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1996, էջ 200, 286 եւն.:

նի որ Ձիրաւի դաշտում հռոմէացիները զինուած էին ոսկեայ եւ արծաթեայ զէնքերով[19], ինչը, բացի հռոմէական զօրքի հզօրութիւնից, այլաբանօրէն ցոյց է տուել պարսիկների դէմ քրիստոնէական արդարացի կռիւը, աստուածային լոյսը[20], քանի որ ոսկէ[21] եւ արծաթէ զէնքերով չեն կռւում (զինուորների հանդերձանքի եւ սպառազինութեան որոշ մասեր կարող էին ոսկուց ու արծաթից պատրաստուած լինել[22]):

Այն, որ ոսկին իր գոյնով խորհրդանշել է արքայական իշխանութիւն, պարզ երեւում է նաեւ Վասակ Սիւնու արքայական զգեստից, որով ներկայանում է Յազկերտ Բ.ին: Եղիշէն Վասակի հանդերձների մասին գրում է.

> Եւ եղեւ յաւուր միոջ մեծի զամենայն երեւելի զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել: Կոչեցին եւ զուրացեալն. եւ նա ըստ առաջին կարգի աւրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր եւ զպատուաւուրսն եւ զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, եւ զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով եւ ակամբք պատուականաւք ընդ մէջ իւր ածէր, եւ զգինդսն յականջսն, եւ զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն

---

[19] Խորենացի, էջ 303:

[20] Сергей Сергеевич Аверинцев, *Поэтика ранневизантийской литературы* (Սերգէյ Սերգէեվիչ Աւերինցեւ, Վաղ բիւզանդական գրականութեան պոետիկան), «Ազբուկա-կլասսիկա» հրատ., Սանկտ-Պետերբուրգ, 2004, էջ 410-11:

[21] Միջնադարի քրիստոնէական նշանագիտութեան մէջ ոսկին համարուել է հոգեւոր անապակութեան ցուցիչը: Բիւզանդական իրականութեան մէջ ոսկին, արտացոլելով Աստծոյ փառքը, ուղղակիօրէն յարաբերւում է այդ փառքի անձնաւորումը հանդիսացող հրեշտակներին: Ծիրանիի նման, ոսկին եւս արքայական արժանապատուութեան խորհրդապատկերն է (Հ. Քէօսէեան, *Հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութիւն*, «Մատենադարան» հրատ., Երեւան, 2021, էջ 141-42): Հին Հռոմում դեղինը սրբազան գոյն էր (Пастуро, *Символическая*, էջ 218), ինչը նշանակում է, որ, ըստ Խորենացու, քրիստոնեայ հռոմէացիներն ու հայերը կռւում էին անհաւատ պարսիկների դէմ:

[22] Հմմտ.՝ Համլէտ Պետրոսեան, «Ոսկին հայ միջնադարեան աշխարհընկալման համակարգում», *Հին Հայաստանի ոսկին*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 63: Պետրոսեանը, անդրադառնալով Ձիրաւի ճակատամարտում հայերի ու հռոմէացիների սպառազինութեանը, գրում է.

ոսկէ, արծաթէ եւ պղնձէ զանազան մակերեսները արեւի ճառագայթների անդրադարձումներով եւ իրենց սեփական փայլով ոչ միայն թշնամու համար ճնշող հոգեբանական մթնոլորտ են ստեղծում, այլեւ կռուին տալիս են տիեզերական ակտի ալեգորիա» (անդ, էջ 64):

Նկատենք, որ աքեմէնեանների՝ անմահների բիւր կոչուած ընտիր զօրամասի հանդերձանքը եւս շողշողում էր ոսկու առատութիւնից (*Herodotus*, with an English translation by A. D. Godley, *Vol. III, Books V-VII*, Harvard University Press, London-Cambridge-Massachusetts, 1938, Loeb Classical Library, VII, 83, էջ 390):

զթիկամբքն. եւ զամենայն աւրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս. շքեղ եւ երեւելի քան զամենեսեան երեւէր բազմութեանն[23]:

Ինչպէս տեսնում ենք Վասակի զգեստներն ու պատիւներն իրօք արքայական են եղել, ու պատահական չէ, որ ոսկեղէն խոյրը, ոսկեձոյլ կամարը, գինդերը համադրելի են վերեւում մէջբերուած հայոց թագաւորների իշխանութեան գոյների հետ: Այս առումով, Եղիշէի տեղեկութիւնը որոշակիօրէն համադրելի է Խորենացու՝ վերեւում մասամբ մէջբերուած այն տեղեկութեանը, թէ Արտաշէս արքան Արգամին տալիս է երկրորդական գահը՝ նրան պատուելով յակինթներով զարդարուած պսակով, երկու ականջներին գինդերով, մի ոտքին կարմիր կօշիկով, ինչպէս նաեւ թոյլ է տալիս գործածելու ոսկէ գդալ եւ պատառաքաղ ու ոսկեղէն գաւաթներով գինի խմել[24]: Արգամը թագաւորից յետոյ երկրորդ կարեւոր անձն էր պետութեան մէջ: Նոյն կերպ, Վասակն իր պատիւները կարող էր ստացած լինել միայն Սասանեան Իրանի արքայից արքայ Յազկերտ Բ.ի կողմից, այսինքն՝ Վասակը Սասանեան Իրանի տիրակալի կողմից ժամանակին ճանաչուել էր ստորակայ թագաւոր[25]: Վասակը աւատատիրական յարաբերութիւնների պայմաններում չէր կարող առանց իր տիրոջ՝ Յազկերտ Բ.ի թոյլտուութեան կրել նման զգեստներ ու պատիւների արժանանալ[26] (հմմտ. «*եւ նա [Վասակը] ըստ առաջին կարգի աւրինացն*

---

[23] Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին», *Մատենագիրք Հայոց, Ա. հատոր, Ե. դար,* Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 680-81:

[24] Խորենացի, էջ 174: Աբասեանների արքունիքում կարմիր կօշիկներ կրելու իրաւունքը պատկանում էր միայն խալիֆին (Dj. Khaleghi-Motlagh, BĀR. i. From the Achaemenid Through the Safavid Period, https://www.iranicaonline.org/articles/bar-audience?fbclid=IwAR31VVQ3h-eV5SFShkLymgWk4fkAjBml7AzpbVz26JWevXTyS6rR6cvH1vE մատչում՝ 25 Ապրիլ 2023): Ըստ Ստեփանոս Ասողիկի՝ ոսկեճամուկ ծիրանիով արաբ խալիֆներն են պճնազարդուել (*Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական*, հրատ. Ստ. Մալխասեանց, տպ. Ի. Ն. Սկորոխոդով, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 104):

[25] Հմմտ.՝ Յարութիւնեան, «Մովսէս Խորենացու», էջ 177:

[26] Համեմատութեան համար նշենք, որ Սասանեան Խոսրով Բ. Փարուէզ արքայից արքան իր հօր՝ Որմիզդի գօտիով ու սուսերով, թագաւորական հանդերձներով, ոսկի անօթներով, ոսկեզօծ արտախուրակներով (խոյր, ապարօշ), մարգարիտներով ու թանկագին քարերով հիւսուած զանգապանակով, բեհեզեայ գդակով, ոսկեզօծ պատմուճանով, ականակապ վարսակալով ու մանեակով, արծաթեայ գահերով, նժոյգով՝ արքունական սանձով ու թամբով է պատում Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունուն, որը պարսից արքունիքում երրորդ նախարարն էր (Սեբէոս, *Պատմութիւն*, էջ 112, 118, 122, 126, 128): Սեբէոսի տեղեկութիւններից

արքունի»), առանց Սասանեան շահնշահի թոյլտուութեան Վասակի իշխանութիւնը Հայաստանում օրինական չէր համարուի, այսինքն՝ հայ նախարարները Վասակի իշխանութիւնը չէին ընդունի:

Շարունակելով կարմիր գոյնի իմաստաբանութեան քննութիւնը՝ նշենք, որ միջնադարեան եկեղեցական խորհրդաբանութեան մէջ եկեղեցու կարմիր վարագոյրը, որ «Աստուածային գոյը» սահմանազատում է «ստորադաս արարածներից», իր այդ գոյնով Աստծոյ գաղափարի կրողն է[27]: Կարմրի հետ աղերսուած է ծիրանին, որ ակնարկում է Քրիստոսի արքայական հանգամանքը[28], ընդ որում՝ պատահական չէ, որ ծիրանի կրելը վերապահուած էր բացառապէս բիւզանդական կայսրերին:

Միջնադարի աստուածաբանական միտքը կարմիրը (Աստուած) բարձր էր դասում միւս գոյներից, այդ թւում նաեւ կապոյտից (հրեշտակներ)[29]:

ակնյայտ է, որ Սմբատ Բագրատունին բացառիկ, կարելի է նոյնիսկ ասել արքայական պատիւների է արժանացել Սասանեան հզօր տիրակալի կողմից, սակայն Սմբատ Բագրատունու պատիւները չեն կարող Աւարայրի ճակատամարտից 150 տարի յետոյ վկայել նրա թագաւոր լինելու մասին: Հայոց մեծանուն զօրավարը նման փառքի էր արժանացել միայն իր ռազմական փայլուն յաղթանակների համար:

[27] Քէօսէեան, էջ 136: Հետաքրքիր է Գ. Նալբանդեանի այն կարծիքը, որ Աշտարակի Կարմրաւոր, Սպիտակաւոր, Ծիրանաւոր եկեղեցիների անունները հնարաւոր է կապ ունեն ոչ թէ շինաքարի գունանունների, այլ աւետարանիչներ Մարկոսի, Ղուկասի եւ Մատթէոսի համապատասխանաբար կարմրագոյն, սպիտակագոյն եւ ծիրանագոյն թիկնոցների կամ կենդանապատկերների հետ, այսինքն՝ ծիրանաւոր նշանակել է ծիրանի կրող եւն. (Գ. Նալբանդեան, «Աշտարակի եկեղեցիների անուանումների խորհրդանշական ստուգաբանման շուրջ», *Հայոց սրբերը եւ սրբավայրերը*, «Հայաստան», Երեւան, 2001, էջ 192-99):

[28] Քէօսէեան, էջ 136: Ծիրանի պատմուճան կրում էին հին Հռոմի թագաւորները (Ն. Մաշկին, *Հին Հռոմի պատմութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1951, էջ 152): Նկատենք, որ հնագոյն ժամանակներից սկսած ծիրանին շատ թանկարժէք էր, բարձրորակ եւ պատրաստում էր շատ մեծ դժուարութեամբ, հետեւաբար ծիրանի գործուածքներ կրելը ցոյց էր տալիս տուեալ անձի հասարակական բարձր կարգավիճակը, իսկ ժամանակի ընթացքում միայն ծիրանի գործուածքներից պատրաստուած հագուստ կրելը դառնում է հռոմէական եւ բիւզանդական կայսեր մենաշնորհը, քանի որ ծիրանի զգեստը խորհրդանշում էր բացարձակ իշխանութիւնը եւ աստուածային էութիւնը (Մ. Пастуро, *Красный*, էջ 31-33): Օրինակ, Պլուտարքոսը նշում է, որ Մարկոս Անտոնիոսի ծիրանի թիկնոցը շատ թանկարժէք էր (*Plutarch's Lives*, with an English translation by B. Perrin, *Vol. IX*, Harvard University Press, London- Cambridge-Massachusetts, 1959, Loeb Classical Library, Antony, XXII, էջ 184):

[29] Քէօսէեան, էջ 137:

Կարմիր գոյնը խորհրդանշում է կեանքն ու մահը[30], Քրիստոսի արիւնը, մարտիրոսական չարչարանքը[31], եւ այս առումով - գոնէ նախնական – կարող ենք մտածել, որ Վարդան Մամիկոնեանին Կարմիր մակդիրը գուցէ տրուել է եկեղեցու կողմից՝ որպէս քրիստոնէական հաւատի համար նահատակուած հերոս[32]:

Բայց նկատի ունենանք, որ կարմիրը (նաեւ ծիրանին), օրինակ հին Իրանում, հնագոյն ժամանակներից հասարակութեան ռազմական դասի հագուստի գոյնն էր, որը նաեւ արքայական հագուստի (անաքսիրիդ-պարսկական երկար ու նեղ անդրավարտիք) գոյներից մէկն էր[33]:

Գոյների խորհրդաբանութեան մասին խօսելիս, պէտք է նկատի ունենանք, որ նոյն կարմիր գոյնի իմաստաբանութիւնը ժամանակի ընթացքում ենթարկւում էր որոշակի փոփոխութիւնների: Օրինակ, անտիկ մշակոյթի ընկալման մէջ կարմիրը դեղինի հետ անտիկ գոյներն են. կարմիրը

---

[30] Անիում՝ «փոքրիկ իշխանուհու» դամբարանում, աճիւնը դրուած է եղել ասեղնագործ մետաքսեայ կարմիր կտորի վրայ (Иосиф Абгарович Орбели, *Избранные труды*, Իոսիֆ Աբգարովիչ Օրբելի, Ընտիր երկեր, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1963, էջ 44-46), ինչը տուեալ դէպքում մահուան խորհրդանիշն էր:

[31] Նահատակութեան կարմիր գոյնով ոտնամաններ կրում էին նաեւ կաթոլիկ եկեղեցու պապերն ու եպիսկոպոսները (E. Panou, "Colour in Byzantine Historiography (13th–15th Centuries)," *Βυζαντινά Σύμμεικτα*, 29:2019, Athens, էջ 204-5): Քրիստոնէական իմաստաբանութեան տեսանկիւնից (ծնունդ ու մահ) պէտք է բացատրել սրբերի կառքի նկարագրութեան վերաբերեալ Մովսէս Դասխուրանցու կարմիր գոյնի մասին (սպիտակ ձիերի պոչերը կարմիր ներկելը, կարմրագոյն ընդելուզուած կերպասներ) միքանի տեղեկութիւնները (Կաղանկատուացի, էջ 62, 69): Չնայած կարող ենք ենթադրել, որ այդ նկարագրութեան մէջ կարմիրը կապուած էր նաեւ Հայոց Արեւելից կողմերում արքայական իշխանութեան իմաստաբանութեան հետ:

[32] Հմմտ.՝ *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց*, «թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիր՝ Գ. Տէր Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց, ԵՊՀ հրատ., Երեւան, 1982, էջ 80:

[33] Бободжан Гафурович Гафуров, *Таджики. Древнейшая, древняя и средневековая история*, (Բոբոջան Գաֆուրովիչ Գաֆուրով, Տաջիկներ. հնագոյն, հին եւ միջնադարեան պատմութիւնը), Գիրք Ա, 2րդ հրատ., «Իրֆոն» հրատ., Դուշանբէ, 1989, էջ 38-39. նաեւ՝ Sh. Shahbazi, Clothing ii. In the Median and Achaemenid periods (https://www.iranicaonline.org/articles/clothing-ii?fbclid=IwAR1O_cvmR-6QXIZBgWU356fjZ1FQw1RcbTwDbIZZ1futI1UWQHAI4aAJ2Oo , մատչում՝ 18 Ապրիլ 2023); Xenophon, *Cyropaedia, Vol. II, VIII, III, 13*, էջ 354. նաեւ՝ J. Rose, "Sasanian Splendor: The Appurtenances of Royalty," *Robes and Honor: The Medieval World of Investiture*, ed. by S. Gordon, Palgrave Macmillan, New York, 2001, էջ 37:

զգայականութեան իրական գոյնն է[34]: Իսկ մենք վերեւում տեսանք, որ քրիստոնէութեան մէջ կարմիրի խորհուրդն այլ էր՝ կապուած լինելով աստուածաբանական իրողութիւնների հետ: Միջնադարեան Եւրոպայում Հռոմի պապը եւ կարդինալները հագնում էին կարմիր կամ կարմիր ու սպիտակ զգեստ: ԺԶ. դարից սկսած Հռոմի պապի հանդերձանքի մէջ սպիտակը սկսում է գերիշխել եւ մեր ժամանակներում պապի միայն կօշիկներն են կարմիր մնացել[35]:

Պէտք է նշել, որ գոյների իմաստաբանութիւնը կարելի է մեկնաբանել ե՛ւ դրական, ե՛ւ բացասական տեսանկիւնից: Կայ վատ եւ լաւ կարմիր գոյն: Միջնադարեան Եւրոպայում այսպէս ասած վատ կարմիրը հակադրւում էր աստուածային եւ քրիստոսաբանական սպիտակին եւ ուղղակիօրէն կապւում էր սատանայի, դժոխքի ու Յուդայի հետ: Կարմիրը դժոխքի կրակի եւ սատանայի դէմքի գոյնն է, եւ ԺԲ. դարից յետոյ Եւրոպայում սատանան աւելի յաճախ է պատկերւում ալ վարսերով ու կարմիր դէմքով[36]:

ԿԱՐՄԻՐ ԳՈՅՆԻ ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՅԼ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Ելնելով մեր առջեւ դրուած նպատակից, բնականաբար, պէտք է ցոյց տանք, թէ կարմիր գոյնն ի՛նչ նշանակութիւն է ունեցել Հայաստանի հարեւան երկու հզօր տէրութիւնների՝ Բիւզանդիայի (Արեւելահռոմէական կայսրութիւն) եւ Սասանեան Իրանի հասարակական-քաղաքական եւ գաղափարախօսական կառոյցներում: Ակնյայտ է, որ կարմիր գոյնի նշանա-

---

[34] Освальд Шпенглер, *Закат Европы*, (Օսվալդ Շպենգլէր, Եւրոպայի մայրամուտը), «Ֆենիկս» հրատ., Դոնի Ռոստով, 1998, էջ 356: Օրինակ, հին սլաւոներէնում կարմիր-«красный» բառը նախապէս ունեցել է «красивый»-գեղեցիկ նշանակութիւնը (Николай Максимович Шанский, Валерий Васильевич Иванов, Тамара Васильевна Шанская, *Краткий этимологический словарь русского языка*, (Նիկոլայ Մաքսիմովիչ Շանսկի, Վալերի Վասիլեւիչ Իւանով, Տամարա Վասիլեւնա Շանսկայա, Ռուսաց լեզուի համառօտ ստուգաբանական բառարան), «Լուսաւորություն» հրատ., Մոսկուա, 1971, էջ 219): Անտիկ խորհրդաբանութեան մէջ կարմիրի եւ ծիրանիի ընկալման մասին մանրամասն տե՛ս՝ L. Llewellyn-Jones, "Body and Clothing," *A Cultural History of Color in Antiquity*, ed. by D. Wharton, Bloomsbury Academic, London, 2021, էջ 90-95:

[35] Пастуро, *Красный*, էջ 51: Ամբողջովին կարմիր հանդերձանք էին կրում Կարոլինգեան արքայատոհմի կայսրերը: Կարմիր պատմուճան էին կրում Եւրոպայի բազմաթիւ թագաւորներ: Եւրոպայի ամբողջ ազնուական դասն էր կրում կարմիր գոյնի հագուստներ, թագաւորների, ազնուականների դրօշների ու զինանշանների գոյների մէջ կարմիրը գերիշխող էր (անդ, էջ 51-53): Կարմիր գոյնի նման տիրապետութիւնը ցոյց է տալիս, որ այն ուղղակիօրէն զուգորդւում էր իշխանութեան գաղափարի հետ:

[36] Пастуро, *Символическая*, էջ 217. նաեւ նոյնի՝ *Красный*, էջ 17-18, 45-46:

գիտական կարեւորութիւնն ընդգծուած է նաեւ Սասանեան Իրանի մտահոգեւոր պատկերացումներում: Այսպէս, կարմիր-սպիտակ-կապոյտ (տարածուած էր նաեւ կարմիր-կապոյտ համադրութիւնը) համադրութեամբ զգեստներն արտացոլել են օրինակ տիեզերքի երեք՝ վերին, միջին, ստորին շերտերը, համապատասխան որոնց բաժանուած էր հասարակութիւնը: Վերին շերտը սպիտակն է (վերնաշապիկը), միջին շերտը՝ կապոյտը (անդրավարտիքը), ստորինը՝ կարմիրը (կօշիկը): Խոսրով Բ. Փարուէզի վերնաշապիկում այս երեք գոյներն առկայ են[37]: Աւելի վաղ ժամանակներում կարմիր գոյնը տիրապետող է եղել, յատկապէս երբ այն ազնուականութեան գոյնն է եղել: Պարսկական բանակում եղել է հագուստի աստիճանակարգ՝ ըստ կարմրի չորս երանգների[38]: Կարմիր պատմուճան է կրել Սասանեան Բահրամ Բ. արքայից արքան[39], ինչը համադրելի է Հռոմի, Բիւզանդիայի կայսրերի եւ հայոց թագաւորի հանդերձանքի հետ: Անկասկած, կարմիրը Սասանեանների համար, անկախ սեռից, եղել է արքայական գոյն, չնայած նրանցից ոմանք, ինչ-ինչ քաղաքական հանգամանքների բերմամբ, կարող էին այդ գոյնը չօգտագործել[40]: Իրանի հասարակ ժողովրդի հագուստի մէջ եւս կարմիր գոյնը շատ էր տարածուած: Կարմիրի նման տարածումը պայմանաւորուած էր արեան, բնութեան վերածննդի, թաղման ծիսակատարութեան առնչուած իրողութիւններով[41]:

---

[37] S. Yatsenko, "Colour Combinations in the Costume of three Pre-Islamic Dynasties of Iran against the Background of the Synchronous Iranian World," *Proceedings of the 7th International Congress on the Archaeology of the Ancient Near East, 12 April – 16 April 2010*, the British Museum and UCL, London, *Vol. 2*, *Ancient & Modern Issues in Cultural Heritage Colour & Light in Architecture, Art & Material Culture Islamic Archaeology*, ed. by R. Matthews and J. Curtis, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2012, էջ 175-76:

[38] Aeliani, *Varia Historia, Heraclidis Pontici et Nicolai Damasceni quae supersunt*, ad optimorum librorum fidem accurate edita, Sumtibus et typis Car. Tauchnitii, Lipsiae, 1829, IX, III, էջ 125:

[39] E. Haerinck, Overlaet B., "The Sasanian Rock Relief of Bahram II at Guyum (Fars, Iran)," *Iranica Antiqua, XLIV*:2009, էջ 534: Ստեփանոս Օրբէլեանի տեղեկութիւնից երեւում է, որ Սասանեանների համար ծիրանին արքայականութեան խորհրդանիշ է եղել (*Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 33):

[40] H. Emrani, "Like Father, Like Daughter: Late Sasanian Imperial Ideology & the Rise of Bōrān to Power," *e-Sasanika*, 5:2009, էջ 6-7. նաեւ՝ Rose, էջ 37:

[41] Yatsenko, էջ 176-77. Կարմիր գոյնի խորհրդի տարբեր ժամանակային ընկալումների մասին տե՛ս՝ Элеонора Игоревна Григорьева, *Анализ развития цветовой символики в христианской культуре* (Էլէոնորա Իգորեւնա Գրիգորեւա, Գոյների խորհրդաբանութեան զարգացման վերլուծութիւնը քրիս-

Պահլաւական բնագրերից եւս երեւում է, որ կարմիր զգեստներ կրել են զինուորները, ընդ որում՝ հետաքրքիր է, որ կարմիրը կապուած է եղել արեւմուտքի հետ (խորհրդանշելով կարմիր մայրամուտը), որտեղից յայտնւում էին հռոմէացի, քրիստոնեայ թշնամի զինուորները՝ կարմիր զէնքերով ու հանդերձանքով[42]: Հնդկական քշատրիների՝ ռազմիկների դասը եւս կրել է կարմիր հագուստ ու, բացի զինուորական գործից, զբաղուել է նաեւ պետութեան կառավարմամբ[43]: Իրանցիների համար կարմիրը խորհրդանշել է արիւնը, ուժը, եռանդը: Իրանական դիցաբանութեան մէջ Որմիզդը գտնուել է վերեւում՝ դրախտում, ինչը կապուել է սպիտակ լոյսի հետ, իսկ ներքեւը, որտեղ դժոխքն էր՝ Ահրիմանի կեցավայրը, կապուած էր մթի, այսինքն՝ սեւ գոյնի հետ: Որմիզդի եւ Ահրիմանի աշխարհների միջեւ ընկած միջնաշխարհի գոյնը կարմիրն էր, քանի որ միջնաշխարհի կենտրոնում գտնուող եւ մինչեւ երկինք հասնող Հարբուրզ (Ալբուրզ) լեռն Աւեստայում անուանուած է ոսկէ, իսկ ոսկին կարմիրի տարբերակներից է[44]:

Բիւզանդական կայսրութիւնում *ἐρυθρὸς*-կարմիր գոյնը (թանաք, ոտնաման) ծիրանի պատմուճանի հետ խորհրդանշում էր կայսերական իշխանութիւնը[45]: Ցանկացած մէկը, ով կը կրէր արքայական ծիրանի զգեստ, պետական դաւաճանութեան համար մահապատժի կ'ենթարկուէր[46]:

տոնէական մշակոյթում), *Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի Սամարայի գիտական կենտրոնի տեղեկագիր*, 13(2):2011, էջ 1477-78:

[42] Ольга Михайловна Чунакова, "Цветовая символика в пехлевийских текстах," (Օլգա Միխայլովնա Չունակովա, Գոյների խորհրդաբանութիւնը պահլաւական բնագրերում), *Պետերբուրգեան արեւելագիտութիւն*, 6:1994, «Պետերբուրգեան արեւելագիտութիւն» կենտրոն, Սանկտ-Պետերբուրգ, էջ 195-96. նաեւ՝ Ռ. Նիկողոսեան, *Պահլաւական ուսումնասիրութիւններ: Մենագրութիւն Զրադաշտի կրօնի եւ միջին պարսկական գրականութեան վերաբերեալ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2018, էջ 274, որտեղ «քրիստոնէական չարքը»՝ հռոմէացիները, նոյնացւում են խաչակիրներին, քանի որ «Վահման յասնի մեկնութիւն» երկը վերջնական տեսքի է բերուել ԺԲ. դարում: Սակայն կարմիր գոյնի նոյնացումը արեւմուտքի, հռոմէացիների հետ ունէր շատ աւելի հին պատմութիւն:

[43] Նոյն, էջ 196. նաեւ՝ Борис Мысыккаты, "Арийские (индоиранские) истоки аланского триколора," (Բորիս Միսիկկատի, Ալանական եռագոյնի արիական (հնդիրանական) ակունքները), *Պատմաբանասիրական արխիւ*, 9:2019, Վլադիկաւկազ, էջ 29:

[44] Чунакова, էջ 198:

[45] Մանրամասն տե՛ս՝ Panou, էջ 195-230. նաեւ՝ Kiilerich, էջ 439-40: Բիւզանդիայի կայսր Միքայէլ Է. Դուկասի՝ Հունգարիայի թագաւորին ուղարկած թագում կայսեր անունը գրուած է կարմիր գոյնով, իսկ Հունգարիայի թագաւորի անունը՝ կանաչ գոյնով (Андре Грабар, *Император в византийском искусстве*, (Անդրէ

Երկու գերիզօր հարեւանների՝ Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Իրանի միջեւ գտնուող Մեծ Հայքի թագաւորների համար եւս ծիրանին եղել է արքայական խորհրդանիշ: Այս մասին հաղորդում է Ագաթանգեղոսը, ըստ որի՝ Հռոմի կայսրը Տրդատ Մեծին պատւում է թագով եւ ծիրանի պատմուճաններով: Ընդ որում՝ Ագաթանգեղոսի տեղեկութիւններից երեւում է, որ ծիրանին նաեւ կայսերական իշխանութեան ու քրիստոնեայ սրբերի խորհրդանիշ էր[47]: Անկախ այն իրողութիւնից, որ Տրդատի՝ Հռոմի կայսեր կողմից ստացած թագը եւ ծիրանի[48] պատմուճանը ցոյց են տուել հայոց արքայի վասալական կախուածութիւնը Հռոմից: Մեզ համար էականն այն է, որ Մեծ Հայքի թագաւորների համար եւս ծիրանին արքայական իշխանութեան խորհրդանիշ է եղել:

Դասխուրանցու տեղեկութիւնից պարզւում է, որ արաբ խալիֆ Մուաուիան «արեւելքի իշխան» Ջուանշիրին պատւում է նաեւ վառ գոյնի ծիրանիներով («զուարճատեսիլ ծիրանիս»)[49], ինչը խօսում է այն մասին, որ խալիֆը Աղուանք-Առանի իշխանին պատւում է արքայական հանդերձներով:

Մեր քննութեան համար որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցու տեղեկութիւնները: Պատմիչի տեղեկութիւններից երեւում է, որ իշխանաց իշխան, յետոյ թագաւոր դարձած

Գրաբար, Կայսրը բիւզանդական արուեստում), «Լադոմիր» գիտահրատարակչական կենտրոն, Մոսկուա, 2000, էջ 35-36), ինչը վկայում է կայսերական իշխանութեան աւելի բարձր հեղինակութեան մասին:

[46] Аверинцев, էջ 119. նաեւ՝ Пастуро, *Красный*, էջ 33-34:

[47] *Ագաթանգեղայ պատմութիւն հայոց*, քննական բնագիր՝ Գ. Տէր Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, աշխարհաբար թարգմ. եւ ծանօթ.՝ Ա. Տէր Ղեւոնդեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1983, էջ 36, 98, 428: Թովմա Արծրունին յայտնում է, որ արաբ ոստիկան Եուսուֆը Վասպուրականի Գագիկ Արծրունուն թագադրում է ոսկեայ թագով եւ հագցնում ոսկեզարդ պատմուճան (Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 442): Այս տեղեկութիւնից կարող ենք եզրակացնել, որ ծիրանի ու ոսկեզարդ պատմուճանները նոյնն են, կամ ծիրանի պատմուճանն աւելի բարձր գերակայ դիրք ունեցող գահակալի համար է եղել: Ամէն դէպքում ծիրանին եւ ոսկեգոյնը կարմիրի երանգներից կամ տարբերակներից են: Մասնագիտական գրականութեան մէջ կայ տեսակէտ, որ ոսկու գոյնը կարմիրն է, արծաթի գոյնը՝ սպիտակը (Мысыккаты, էջ 33, ծնթ. 10):

[48] Նշենք, որ «*ծիրանի ասելով [միջնադարի] հայ մեկնիչները նկատի ունեն կապարեալ կարմիրը, որն իր արժանիքների համար արքայական է համարւում… Ծիրանի գոյնը թագաւորական է: Այն բառացի համընկնում է պուրպուր գոյնին…*» (Վիգէն Ղազարեան, «Գոյնի ուսմունքը խորանների մեկնութիւններում», *Գանձասար հանդէս*, Բ:1992, Երեւան, էջ 328-340):

[49] Կաղանկատուացի, էջ 198:

Աշոտ Ա. Բագրատունին աչքերի մէջ արեան կէտեր ունէր, որոնք Դրասխանակերտցին համեմատում է կարմիր յակինթի հետ[50]: Պատմիչի այս տեղեկութիւնը համադրելի է Խորենացու Տիգրան Երուանդեանի եւ Սմբատ Բագրատունու նկարագրութեան հետ[51], բայց, ըստ էութեան, արիւնը, կարմիր յակինթը խօսում են Բագրատունեաց թագաւորի զինուորական լինելու մասին[52]: Մէկ այլ տեղեկութիւնից իմանում ենք, որ արաբ ոստիկան Եուսուֆին Սմբատ Ա. Բագրատունին ի թիւս այլ նուէրների ուղարկում է նաեւ կարմիր որդանով ներկուած իրեր[53]: Այս պարագայում կարմիր գոյնը նշանակում է, որ Բագրատունի թագաւորն ընդունում է արաբ ոստիկանի գերակայութիւնը: Դրասխանակերտցու վկայութիւններից մէկից տեղեկանում ենք, որ Բիւզանդիայի կայսրը Սմբատ Ա.ի որդուն՝ արքայորդի Աշոտին, զարդարում է ծիրանազգեստ փառքով[54], ինչը հաստատում է, որ ծիրանին եւս Բագրատունիների արքայական իշխանութեան խորհրդանիշերից էր:

Վարդան Մամիկոնեանի թագաւոր լինելու հարցը քննելիս պէտք է ուշադրութիւն հրաւիրել նաեւ Խորենացու հետեւեալ տեղեկութեանը: Պարսից արքունիքում գտնուող Սահակ Պարթեւին, եթէ վերջինս ամբաստանէր հայոց Արտաշէս-Արտաշիր արքային, Բահրամ կամ Վռամ Ե. արքայից արքայի հրամանով պարսից հազարապետը խոստանում է «*եւ զթոռն քո զՎարդան կարգեսցէ ի վերայ հայոց զուգահաւասար թագաւորին եւ համապատիւ*»[55], այսինքն՝ պէտք է նկատի ունենալ, որ Վարդան Մամիկոնեանի հեղինակութիւնը Սասանեանների արքունիքում շատ բարձր է գնահատուել դեռ այն ժամանակ, որպէսզի նրան թագաւորին հաւասար պատիւներ խոստանային: Հետեւաբար, պատահական չէ, որ 428ին հայոց պետականութեան անկումից 23 տարի յետոյ Վարդան Մամիկոնեանը հայոց թագաւոր լինելու լաւագոյն թեկնածուն էր՝ Աւարայրի ճակատամարտին մասնակցելով արդէն որպէս հայոց արքայ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեր քննութիւնը կարմիր գոյնի իմաստաբանութեան մասին ցոյց է տալիս, որ Վարդան Մամիկոնեանի Կարմիր մականունը հենց այնպէս չի

---

[50] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց*, էջ 140:

[51] Խորենացի, էջ 72-73, 181:

[52] Ստեփանոս Ասողիկը յայտնում է, որ Կարսի Աբաս թագաւորի զօրագունդը կարմրազգեստ էր (*Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն փիեզերական*, էջ 252):

[53] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց*, էջ 200:

[54] Նոյն, էջ 286:

[55] Խորենացի, էջ 348:

տրուել Ե. դարի հայ ամենանշանաւոր պատմական գործչին: Վարդան Մամիկոնեանի դէպքում «Կարմիր» մականուան առաջացումը կապել կարմիր գոյնի քրիստոնէաբանական նշանակութեան հետ[56]՝ թերեւս պարզունակ կը լինի, քանի որ Աւարայրի ճակատամարտում բոլորը նահատակուեցին՝ թափելով մարտիրոսութեան արիւնը: Ըստ էութեան, Վարդան Մամիկոնեանի «Կարմիր» պատուանունը սկզբում այլ իմաստ է ունեցել, եւ միայն յետոյ է, որ հայ եկեղեցական պատմիչները «Կարմիր» ածականը կապել են նահատակութեան հետ եւ նրան անուանել նաեւ Սուրբ, Երանելի[57]:

Վերեւում կատարուած վերլուծութիւնը թոյլ է տալիս առաջարկել մի վարկած, որը կարող է այլ ուսումնասիրութիւնների համար յետագայ քննութեան նիւթ դառնալ: Հնագոյն ժամանակներից կարմիր գոյնը կապուած է եղել տարբեր հասարակութիւններում ռազմական դասի կարգավիճակը ցոյց տալու հետ: Պետական կազմաւորումների առաջացման ժամանակ ռազմական դասի ներկայացուցիչները (ցեղապետ) դառնում էին թագաւորներ՝ պահպանելով ռազմիկի նշանային յատկանիշերը: Աստիճանաբար թագաւորների հանդերձանքի մէջ կարմիր գոյնն իր երանգներով (ծիրանին նոյնպէս) խորհրդանշում էր բարձրագոյն արքայական իշխանութիւնը: Կարմիր մականունը ստացած մարդը սովորաբար շիկակարմիր մօրուք կամ արնագոյն դէմք է ունեցել, բայց այդ մականունը կարող էր տրուել նաեւ ցասկոտ, դաժան, արիւնարբու լինելու պատճառով[58]: Հայոց սպարապետի դէպքում այս հանգամանքները չկան: Վարդան Մամիկոնեանը հայոց սպարապետն էր, հետեւաբար միայն զինուորական լինելու համար նրան կարմիր անուանելը պարզունակ ու անիմաստ կը լինէր: Վարդան Մամիկոնեանը պէտք է թագաւոր լինէր, որ նրա Կարմիր պատուանունն ընկալուէր արքայականութեան խորհրդանիշ. կարմիրն իշխանութեան գոյնն էր: Հայոց սպարապետը թագադրուել է հայրենասիրական ուժերի կողմից եւ ըստ երեւոյթին կրել է կարմիր ու ծիրանի հանդերձանք: Հնարաւոր է՝ այդ արքայական հանդերձանքի[59] պատճառով հենց ժողո-

---

[56] Խօսքը Քրիստոսի եւ յանուն Քրիստոսի թափած արեան մասին է (Мишель Пастуро, *Желтый. История цвета*, (Միշէլ Պաստուրօ, Դեղին. գոյնի պատմութիւնը), *Նոր գրական հանդէս*, Մոսկուա, 2022, էջ 53):

[57] Տե՛ս, օրինակ՝ *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց*, էջ 84, 134, 140, 168. նաեւ՝ Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 128:

[58] Пастуро, *Красный*, էջ 41:

[59] Հետաքրքիր է, որ գեղանկարիչ Գրիգոր Խանջեանի «Վարդանանք» ստեղծագործութեան մէջ Վարդան Մամիկոնեանը պատկերուած է կարմիր ու ոսկեգոյն թիկնոցով: Ի՞նչ խորհուրդ է դրել կարմիր գոյնի մէջ գեղանկարիչը՝ ինձ յայտնի չէ: Թերեւս, նա էլ նկատի է ունեցել նահատակութեան արիւնը:

վուրդն է Վարդան Մամիկոնեանին անուանել Կարմիր՝ նկատի ունենալով նրա թագաւոր լինելը: Ժողովրդի կողմից տրուած Կարմիր մականուան մէջ աւելի ուշ հայոց եկեղեցին այլ (թէկուզ անուղղակի, թաքնուած) իմաստ պէտք է դնէր: Ամէն դէպքում, մենք չգիտենք՝ Սեբէոսը Վարդան Մամիկոնեանի Կարմիր մականուան մէջ քրիստոնէական խորհուրդ տեսե՞լ է, թէ՞ ոչ, բայց որպէս հոգեւորական՝ կարող էր նկատի ունենալ, որ հայոց սպարապետի մականունը կապուած է յանուն Քրիստոսի թափուած արեան հետ:

Ընդամէնը 23 տարի առաջ անկախութիւնը կորցրած ժողովրդի համար 451ին պետականութեան վերականգնումը խիստ հրատապ էր՝ յատկապէս պարսկական ճնշումներից յետոյ: Նկատենք նաեւ, որ Վարդան Մամիկոնեանը եւ նրա համախոհ նախարարները պետականութեան շրջանի ծնունդներ էին, ըստ այդմ էլ՝ պետականութեան վերականգնումը նրանց համար սոսկ գաղափար չէր, այլ՝ իրական նպատակ, եւ նրանք պայքարում էին յանուն պետականութեան վերականգնման:

Նաեւ ուշադրութիւն հրաւիրենք մի իրողութեան վրայ, որը հաւանաբար թոյլ կը տայ կրկին հաստատել Վարդան Մամիկոնեանի թագաւոր լինելը: Եղիշէն Աւարայրի ճակատամարտում ընկած նախարարներին ընդհանրական անուանում է քաջ նահատակներ, բայց միայն հայոց սպարապետին է անուանական Քաջ Վարդան կոչում[60]: Քաջ ածականով հայ պատմիչներն անուանել են հիմնականում նահապետերին ու թագաւորներին, օրինակ քաջ Հայկ, քաջ Տրդատ, պարթեւաց Արշակ Քաջ թագաւորը եւն.[61]: Քաջ ածականն ունի տարբեր իմաստներ. «լաւ, ընտիր, ազնիւ, առաքինի, պատուական, արի, կտրիճ», նաեւ «դիւցազն, հսկայ» եւն.[62]: Յատկապէս բառի «դիւցազն, հսկայ» նշանակութիւնները պատմական խոշոր անհատներին տրուել են ռազմական մեծ գործերի համար, եւ շատ թագաւորների համար տիտղոսի պատուանուններից են եղել: Քաջը Վահագնի մակդիրն է. նա է երկրային քաջերի դիցաբանական անձնաւորումը եւ առաջնորդը, այսինքն՝ քրիստոնէական աւանդոյթում Քաջ Վարդանը Վահագնի փոխակերպութիւնն է[63]:

---

[60] Եղիշէ, էջ 240:

[61] Խորենացի, էջ 44, 101-2, 225. նաեւ՝ *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան*, էջ 32, 60 եւ այլք:

[62] Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, Հտր. Դ., Պ-Ֆ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1979, էջ 554-55:

[63] Ա. Պետրոսեան, *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2*, ՀԱԻ հրատ., Երեւան, 2020, էջ 71: Քաջերը միայն քաջ ռազմիկները չեն: Այդպէս է կոչում եւ առասպելական արարածների մի ամբողջ դաս, նոր հայերէն՝ քաջքեր: Նոր բանահիւսութեան մէջ քաջքերը, շատ առումներով, կարծես նոյնական են վիշապ-

Հարկաւ, Վարդան Մամիկոնեանն արժանի էր Քաջ մականուանը, եւ վերջին մականունն իմաստային-նշանային առումով հոմանիշ ենք համարում Կարմիր պատուանուանը, այսինքն՝ հայոց սպարապետի Քաջ ու Կարմիր ածականներով ցոյց է տրուել նրա արքայական կարգավիճակը: Սակայն Վարդան Մամիկոնեանի հերոսական վախճանից յետոյ, երբ հայոց պետականութեան վերականգնման հարցն այլեւս օրակարգում չէր, Հայ Եկեղեցու համար Վարդան Մամիկոնեանը դառնում է յանուն քրիստոնէական հաւատի ընկած նահատակ, *հաւատի զինուոր*, որով պէտք է դաստիարակուէին յաջորդ բոլոր սերունդները: Եկեղեցական պատմիչների ազդեցութեամբ աստիճանաբար մոռացութեան է տրւում 451ի ժողովրդաազատագրական պատերազմի իրական նպատակը՝ հայոց պետականութեան վերականգնումը, պատերազմը վերափոխելով կրօնական ազատութեան, կարմիր գոյնը դարձնելով քրիստոնէական դաւանանքի պայքարի խորհրդանիշ:

ON VARDAN MAMIKONYAN'S NICKNAME 'RED' (SUMMARY)

HOVHANNES KHORIKYAN
hovhkhor78@mail.ru

According to the viewpoint of some specialized literature, Vardan Mamikonyan was the king in the Battle of Avarayr in 451. We have made an attempt to confirm this view. In our opinion Vardan Mamikonyan's nickname 'Red' has a specific meaning. In the case of Vardan Mamikonyan it would be very simple to connect the origin of the nickname 'Red' to the red color that has a Christological meaning since in the Battle of Avarayr everyone was martyred in the holy blood of martyrdom. In fact, the honorary name of Vardan Mamikonyan had a different meaning at first. Later on, our church historians connected the 'Red' nickname with martyrdom and Vardan Mamikonyan was called a Saint, and Blissful as well. With reference to our research, red clothing was a symbol of royal power from ancient times, and Vardan Mamikonyan wore red royal clothing. For this very reason he was given the nickname 'Red'. Since then the Armenian church has associated 'Red' with the blood of those martyred for the sake of the Christian faith.

ներին ու չար ոգիներին՝ չարքերին: Բայց հնում այդպէս չի եղել: Քաջ(ք)երը պիտի լինէին Վահագնի հետեւորդները, վիշապներին հակադրուած կերպարներ (նոյն,. նաեւ՝ Армен Егишевич Петросян, "Эволюция героев армянского эпоса," (Արմէն Եղիշէի Պետրոսեան, Հայկական էպոսի հերոսների եղափոխութիւնը), Բանահիւսութիւն. կառուցուածք, տիպաբանութիւն, նշանագիտութիւն, 4(3):2021, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, էջ 102-3):